Արձանագրություն N 2
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-26/4-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 03.06.2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը,
Հանձնաժողովի անդամներ Կ. Ալեյանը, Ա. Օհանյանը, Ա. Մակարյանը և Դ. Մարտիրոսյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Արփա-Սևան թիվ 2 թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ԲՄԱՇՁԲ-26/4-Ա ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2026 թվականի մայիսի 14-ին, ժամը 16:00-ին /հրապարակումը՝ 14.04.2024թ./:

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-24/1-Ա ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Արփա-Սևան» ԲԲԸ	ք. Երևան, Վ. Վաղարշյան 20 հեռ. +374 12 21-11-11	info@arpa-sevan.am , a_ghazaryan@arpa-sevan.am

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
	Չափաբաժին 1 ԱՅԼ ՇԵՆՔԵՐ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ- Արփա-Սևան թիվ 2 թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ գնման ընդհանուր գին 1,924,951,000			
1	«Արփա-Սևան» ԲԲԸ	1,599,425,933.33	319,885,186.67	1,919,311,120

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

29.05.2026թ. հանձնաժողովի նիստի արդյունքներով.

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-26/4-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կողմից ներկայացվել են, սակայն.

1. Ընկերության կողմից ներկայացված հայտում ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության՝ (համաձայն **հավելված N 1-ի**) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ

պարունակող կայքէջի հղմամբ տեղեկատվությունը 2022 թվականի է: Անհրաժեշտ է, որ կայքէջի հղումը պարունակի 2026 թվականի տեղեկատվությունը:

2. **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը անհրաժեշտ է հաստատել էլեկտրոնային ստորագրությամբ:

Հանձնաժողովի որոշումը

1. Հիմք ընդունելով հրավերի 8.9 կետը, 29.05.2026թ. հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը և առաջարկել «Արփա-Սևան» ԲԲԸ -ին մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 01.06.2026թ. շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ծանոթություն

Սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Գնահատման արդյունքներ

Սահմանված ժամկետում «Արփա-Սևան» ԲԲԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել «Արփա-Սևան» ԲԲԸ–ի գնահատման արդյունքները.
2. ՋԿ-ԲՄԱՇՁԲ-26/4-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Արփա-Սևան» ԲԲԸ-ին,
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին («Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ):
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումից հետո ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Է. Բաղալյան
		Կ. Ալեյան
անդամներ		Ա. Օհանյան
		Ա. Մակարյան
		Դ. Մարտիրոսյան
Քարտուղար		Ա. Սարգսյան